մերժման, Դատարանը կարծում է, որ նախապես վճարված պետական տուրքի մասով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարվի լուծված:

Ընդ որում, վերոնշյալի և գործի քննության հետ կապված այլ ծախսերը հավաստող ապացույցների բացակայության պայմաններում Դատարանը կարծում է, որ մնացած մասով դատական ծախսերի բաշխման հարցը պետք է համարել լուծված:

VI. Եզրափակիչ մաս.

Դատարանը, հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով, 17-րդ հոդվածի 7-րդ մասով, 27-րդ հոդվածի 2-րդ մասով, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 360-362-րդ հոդվածներով,

ՎՃՌԵՑ

1. «ԽԱՉՊԱՐ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող «ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲ ընկերության՝ ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին որոշակի գործողություններ կատարել պարտավորեցնելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Ազատ Դունամայյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEDF-0377-4796-B543 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am